Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ԴԱՎԻԹ ՍԵՐՈԲՅԱՆԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Ռուբինա Վարդանի Պետրոսյանի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացման հիմնահարցերի ուսումնասիրությանը: Թեմայի արդիականությունը փաստվում է այն հանգամանքով, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման, նրանց իրավունքների իրացման հետ կապված հարցերում կատարված մի շարք փոփոխություններով պայմանավորված՝ ներկայումս էականորեն փոխվել է երեխայի իրավական կարգավիճակը: Սահմանադրության 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են: Այժմ, էապես փոխվել է վերջիններիս և նրանց խնամքի ու դաստիարակության համար պատասխանատու սուբյեկտների միջև իրավահարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Բացի այդ, օրենսդիրը ՀՀ ընտանեկան օրենսգրքում (այսուհետ՝ Ընտանեկան օրենսգիրք) բավականին ընդգծված տարբերակված մոտեցում է դրսևորել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպմանը միտված ինստիտուտներից՝ խնամակալության և հոգաբարձության, խնամատար ընտանիքի իրավական կարգավորման առումով՝ առավել համապարփակ կարգավորումներ նախատեսելով առավելապես խնամատար ընտանիքի դեպքում: Ուստի, առավել խոցելի խմբում գտնվող այս երեխաների ընտանեկան

դաստիարակության ապահովմանը միտված այս երկու ինստիտուտների իրավահամեմատական ուսումնասիրությունը, դրանց կիրառության արդյունքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրացման առանձնահատկությունները, այդ ընթացքում առաջ եկող խնդիրները պահանջում են համապարփակ ուսումնասիրություն:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացման առնչությամբ ծագող իրավահարաբերությունների տեսական ուսումնասիրությունները ևս անչափ կարևոր են, քանի որ տեսական, գիտական մակարդակում արված եզրահանգումները կարող են կարևոր դեր ունենալ և նպաստել այդ հարաբերությունների իրավական կարգավորմանն ուղղված իրավական ակտերի հետագա կատարելագործման համար: Թեմայի արդիականությունը փաստվում է նաև այն հանգամանքով, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացմանը վերաբերող հիմնախնդիրները հայրենական իրավագիտության մեջ համապարփակ հետազոտության առարկա չեն դարձել: Այս առումով ատենախոսության մեջ վեր հանված հիմնախնդիրների վերաբերյալ հեղինակի կողմից ներկայացված հայեցակարգային լուծումները նաև գիտական և գործնական արժեք են ներկայացնում:

Ատենախոսության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հեղինակն ուսումնասիրել է թեմային վերաբերող մեծածավալ մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև ուսումնասիրության թեմային անմիջականորեն առնչվող բազմաթիվ երկրների օրենսդրություն:

Աշխատանքը կազմված է տրամաբանական հաջորդականությամբ. բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, տասը պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկայի նյութերի ցանկից: Ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, իրավական և փորձառական հիմքերը, ընդհանուր մեթոդաբանությունը, ատենախոսության գիտական նորույթը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնել նպատակային, խուսափել անհարկի կրկնություններից, ապահովել եզրահանգումների համար անհրաժեշտ հարցադրումների քննարկումը: Աշխատանքը գրված է պատշաճ գիտական լեզվով, դրանցում բացակայում են լեզվական և քերականական կանոնների շեղումներ:

Սեղմագրի և ատենախոսության ուսումնասիրությունն ու համադրումը վկայում են, որ պաշտպանության ներկայացված եզրահանգումներն ու ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից մշակված սեղմագրում:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և հնարավորինս նորույթ հանդիսացող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն: Բացի այդ, ատենախոսությունում ակներև է հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրների, գիտական տեսակետների, պրակտիկ նյութերի ու միջազգային փորձի վերաբերյալ:

Ատենախոսության կառուցվածքը, ծավալը և ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված պահանջներին:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որի առնչությամբ ներկայացնում ենք որոշ դիտողություններ.

1. Պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթում արտացոլված առաջարկը խնդրահարույց է: Հեղինակը գտնում է, որ ճգնաժամային խնամատարության դեպքում «ազգակցական դաստիարակությանը նախապատվություն» վերապահելը բոլոր դեպքերում չի կարող բխել «երեխայի լավագույն շահերից» և առաջարկում է, որ երեխայի խնամքն ու դաստիարակությունը ստանձնելու ցանկություն հայտնած բոլոր անձինք առհասարակ հայտնվեն համապատասխանության գնահատման հավասար պայմաններում: Մինչդեռ, Ընտանեկան օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետևում է, որ երեխան ճգնաժամային խնամատարության հանձնվում է ծնողի որոշակի արտակարգ կամ դժվարին իրավիճակում գտնվելու դեպքում, իսկ ճգնաժամային խնամատար ընտանիքը կրում է կարճաժամկետ բնույթ: Ուստի, այս առումով, որոշակի կարճ ժամանակահատված մերձավոր ազգականի կողմից առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության ստանձումը գործնականում ավելի հավանական է՝ պայմանավորված երեխայի ծնողական խնամքից զրկված լինելու փաստի մասին առավել շուտ տեղեկանալու՝ երեխայի հետ ունեցած հնարավոր կապվածությամբ, նրանց միջև փոխըմբռնման առկայությամբ և այլն: Միևնույն ժամանակ, գործող կարգավորումը միտված է Ընտանեկան օրենսգրքի անկյունաքարային սկզբունք հանդիսացող ընտանեկան դաստիարակության առաջնայնության, երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրացման ապահովմանը և ի վերջո երեխային ինստիտուցիոնալ խնամքի և դաստաիարկության հանձնման բացառմանը:

2. Եզրակացության 15-րդ կետում հեղինակն առաջարկում է խնամակալ (հոգա-

բարձու) նշանակելու մասին որոշման մեջ, խնամատարության պայմանագրում խնամարկյալի և ծնողների ու այլ ազգականների հետ շփման կարգն ու պայմանները սահմանելու իրավունք վերապահող, իսկ ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված խնամատարության պայմանագրի օրինակելի ձևում շփման կարգի և պայմանների վերաբերյալ համապատասխան դրույթներ լրացնել: Ընդունելով այս առաջարկի դրական ազդեցությունը առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման առումով և կարևոր նշանակությունը երեխայի՝ ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքի ապահովման, շփվելու իրավունքի իրացման ոչ իրավաչափ սահմանափակումների վերացման առումով՝ կարծում ենք՝ նշված առաջարկը պահանջում էր նաև ներկայացնել դրա իրավական հստակ ձևակերպումը: Այլապես առաջարկը ստանում է հռչակագրային բնույթ:

3. Եզրակացության 26-րդ կետում հեղինակը, առաջարկելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակելի տարածությամբ ապահովելու իրավունքի իրացման կառուցակարգ, նշում է, որ ելակետ չի կարող ընդունվել նախկինում երեխայի նկատմամբ ընտրված խնամքի և դաստիարակության ձևը: Դրական գնահատելով հեղինակի մոտեցումն առավել խոցելի խմբում գտնվող բոլոր երեխաների իրավահավասարության սկզբունքի ապահովման առումով՝ այդուհանդերձ կարծում ենք, որ գործնականում այն միանշանակ կիրառելի չի կարող լինել՝ պայմանավորված առավելապես ինստիտուցիոնալ խնամքի ներքո գտնվող երեխաների ունեցած փաստացի ոչ բարվոք գույքային դրությամբ: Մինչդեռ, օրինակ, խնամակալության և հոգաբարձության դեպքում, որը առկա վիճակագրությամբ հեղինակը փաստում է նաև ատենախոսության մեջ, առավելապես խնամակալություն և հոգաբարձություն ստանձնում են երեխայի հարազատները՝ այդպիսով երեխային ապահովելով նաև բնակելի տարածությամբ: Իսկ օրենսդրական մակարդակում օրենսդիրն ըստ էության «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակելի տարածությամբ ապահովելու առթիվ որոշիչ հանգամանք չի դիտարկում նախկինում ընտրված խնամքի և դաստիարակության ձևը:

Աշխատանքի կապակցությամբ արտահայտված վերոնշյալ նկատառումները, սակայն, կրում են բանավիճային բնույթ և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Մեր գնահատմամբ՝ Ռուբինա Պետրոսյանի հեղինակած «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսական աշխատանքը լիովին

համապատասխանում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսական աշխատանքներին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ,ԴՈՑԵՆՏ՝

Դ. ՍԵՐՈԲՅԱՆ

10.12.2021թ.

«Դ.Սերոբյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ
FACULITY OF LAW